ՀԱՂՈՐԴՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2006-2007 թթ. գործունեության մասին

Ներածություն

2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. մայիսն ընկած ժամանակահատվածում «ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. մայիսն ընկած ժամանակահատվածում հիմնական խնդիրներն են հանդիսացել փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործունեության համակարգումը և Եվրոպայի խորհրդի՝ Փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) կողմից երրորդ փուլի գնահատման նախապատրաստումը:

Սույն հաղորդումը ներկայացնում է այն բոլոր հարցերը, որոնք Հանձնաժողովի կողմից կարևորվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ նաև՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ընթացքում, և որոնց լուծումը պահանջել է այդ գործընթացում ներգրավված բոլոր մարմինների համատեղ աշխատանքը:

Հաղորդման շրջանակներում ներկայացվում են հետևյալ հարցերը. ա) Դիտարկվող ժամանակահատվածում (2006թ. նոյեմբերից մինչև 2007թ. մայիս) Հանձնաժողովի կատարած աշխատանքները, բ) Հանձնաժողովի նոր խնդիրները և հետագա գործունեության ուղղությունները:

Դիտարկվող ժամանակահատվածում Հանձնաժողովի կատարած աշխատանքները

Դիտարկվող ժամանակահատվածում Հանձնաժողովը գումարել է 5 նիստ: Հանձնաժողովի նիստերն ընթացել են նախապես կազմված օրակարգով և կոնկրետ փաստաթղթերի քննարկմամբ: Նախքան նիստերը, դրանց օրակարգն ու նյութերը քննարկվել և համաձայնեցվել են Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խմբի

հանդիպումների ընթացքում: Հանձնաժողովի նիստերն արձանագրվել են, իսկ որոշումները՝ քվեարկվել և հաստատվել Հանձնաժողովի անդամների կողմից:

Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի գործունեությունը ներկայացնելու համար ստորև տրվում է նիստերի քննարկումների ժամանակագրությունը:

2006թ. հոկտեմբերի 25-ի նիստ

1. Նիստում Հանձնաժողովը քննարկել է ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ սահմանված՝ Համապատասխանության բարելավման ռեժիմից բխող պարտավորությունների կատարման հարցը: Հանձնաժողովը որոշել է դիմել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ աշխատանքային խմբի կողմից համատեղ մշակված՝ ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Քր. օր.), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Քր. դատ. օր.) և «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական նախագծերի փաթեթը[1] հրատապ կարգով ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելու համար՝ առաջարկելով այն օրենսդրական նախաձեռնության կարգով անհապաղ ներկայացնել Ազգային ժողով: Այդ փաթեթը 2006թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2007թ. հունվարի 4-ին մտել է ուժի մեջ: Այդ փաստի հիման վրա՝ ՄԱՆԻՎԱԼ-ի և ՖԱՏՖ-ի համատեղ 22-րդ լիագումար նիստում (2007թ. փետրվար) Հայաստանի Հանրապետությունը դուրս է եկել Համապատասխանության բարելավման ռեժիմից: ՄԱՆԻՎԱԼ-ի առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման առաջընթացը քննարկվել է նաև Հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 12-ի և 2007թ. ապրիլի 14-ի նիստերում (տե՛ս նշված նիստերի վերաբերյալ անդրադարձերի 2-րդ կետերը):

2. Բացի այդ, նիստում Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ նաև՝ ՖԴԿ) ներկայացրել է ՄԱՆԻՎԱԼ-ի 20-րդ լիագումար նիստի վերաբերյալ հաշվետվությունը: Հատուկ ուշադրություն է հրավիրվել այն հանգամանքի վրա, որ 2007

---

[1] *Նշված փաթեթով առաջարկվում էին հետևյալ հիմնական լրամշակումները.*

- փողերի լվացման հանցակազմը համապատասխանեցնել միջազգային պայմանագրերով սահմանված փողերի լվացման հասկացությանը (Քր. օր. 190 հոդվածի 1-ին մաս, ՓԼ/ԱՖ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետ),
- որպես փողերի լվացման համար նախորդող (հիմնական) հանցակազմեր սահմանել ՀՀ քրեական օրենսգրքի՝ հանցավոր եկամուտների աղբյուր հանդիսացող հանցակազմերի ցանկը (Քր. օր. 190 հոդվածի 5-րդ մաս),
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման քրեական գործերով սահմանել գույքի վրա կալանք դնելու պարտադիր քննչական գործողություն (Քր. դատ. օր. 233 հոդվածի 1.1 մաս),
- որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմերի համար կիրառվող պարտադիր պատժամիջոց սահմանել գույքի (այդ թվում՝ համարժեք գույքի) բռնագրավումը (Քր. օր. 55 հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ մասեր),
- ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերին համապատասխան՝ սահմանել ահաբեկչության հետ կապված անձանց եկամուտների անհապաղ սառեցման պահանջ (ՓԼ/ԱՖ օրենքի 18.1 հոդված):

թվականին նախատեսվող՝ Էգմոնտ խմբին ՖԴԿ անդամակցությունը առաջ է բերելու անդամության ամենամյա վճարներ կատարելու պարտավորություն: Որոշվել է ճշտել նախատեսվող վճարի չափը և, անդամակցությունից հետո, այդ վճարը պետական բյուջեով նախատեսելու հարցը քննարկել ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ: Այդ որոշման հիման վրա ՖԴԿ-ն պարզել է, որ Էգմոնտ խմբին անդամակցության համար տարեկան անդամավճարը Հայաստանի Հանրապետության համար կկազմի շուրջ 2 հազար ԱՄՆ դոլար, որը վճարելու պարտավորությունն անդամակցությունից հետո կառաջանա միայն Էգմոնտ խումբը միջազգային կազմակերպության վերափոխվելու դեպքում: Էգմոնտ խմբին ՖԴԿ անդամակցության հարցը քննարկվել է նաև Հանձնաժողովի 2006թ. նոյեմբերի 25-ի նիստում (տե՛ս նշված նիստի վերաբերյալ անդրադարձի 1-ին կետը):

3. Որպես քաղաքականությանն առնչվող հարց, նիստում քննարկվել է ՖԱՏՖ-ի 9-րդ հատուկ ստանդարտով նախատեսված՝ կանխիկ արժույթի ներմուծման հայտարարագրման հարցը: Մաքսային պետական կոմիտեի և ՖԴԿ-ի կողմից ճշտվել են արժույթի ներմուծման հայտարարագրման ռեժիմի հիմնական սկզբունքները, որի արդյունքում հարցը ներկայացվել է նաև Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 14-ի նիստում (տե՛ս նշված նիստի վերաբերյալ անդրադարձի 4-րդ կետը):

4. Հանձնաժողովը նիստի ժամանակ քննարկել է նաև «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության նախագիծը և ի գիտություն ընդունել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության գործառույթի իրականացման վերաբերյալ» կանոնակարգի նախագծի շրջանառության ընթացքը: ՖԴԿ-ին հանձնարարվել է կանոնակարգը ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը և որոշվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից դրա ընդունումից հետո դիմել Արդարադատության նախարարությանը կանոնակարգի գրանցման խնդրանքով՝ հաշվի առնելով, որ կանոնակարգի ընդունումն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման համար:

5. Նիստում լսվել և ի գիտություն է ընդունվել «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համալիր միջոցառումների իրականացման նախապատրաստման վերաբերյալ» Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների իրավասու ներկայացուցիչների խորհրդակցության մասին հաղորդումը: Հանձնաժողովը համաձայնել է այն հայտարարությանը, որ ՀԱՊԿ անդամ պետությունների հետ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի «Կանալ» ծրագրի շրջանակում համագործակցությունը կարող է իրականացվել Կենտրոնական բանկի և Ոստիկանության միջև կնքված՝ Փոխըմբռնման համաձայնագրի շրջանակներում:

6. Նիստում հանձնարարվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին լրամշակել ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից 3-րդ փուլի գնահատման մեթոդաբանության ձեռնարկի թարգմանությունը և Հայաստանի Հանրապետության ինքնագնահատման նպատակով ուղարկել գերատեսչություններին: Այդ ինքնագնահատման հիման վրա Ֆինանսական դիտարկումների կենտրոնին հանձնարարվել է ձևավորել միջազգային ստանդարտների ներդրմանն ուղղված գործողությունների կատարման միջոցառումների ծրագիր: Ի կատարումն Հանձնաժողովի այս որոշման՝ Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ՄԱՆԻՎԱԼ-ի 3-րդ փուլի գնահատման նախապատրաստումը ներառվել է ՀՀ կառավարության 2007թ. գերակա խնդիրների շրջանակում, իսկ Հանձնաժողովը 2006թ. դեկտեմբերի 12-ի և 2007թ. ապրիլի 14-ի նիստերում անդրադարձել է դրա կատարման ընթացքին (տե՛ս նշված նիստերի վերաբերյալ անդրադարձների 3-րդ կետերը):

2006թ. նոյեմբերի 25-ի նիստ

1. Հանձնաժողովի այս նիստը հրավիրվել է Էգմոնտ խմբին ՖԴԿ անդամակցելու կապակցությամբ առաջացած օրենսդրական հրատապ փոփոխություններ կատարելու հարցը քննարկելու նպատակով: Հարցի հրատապությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՖԴԿ անդամակցության հարցը մինչ այդ ներկայացվել էր Էգմոնտի ընդլայնման հարցերով աշխատանքային խմբին, որի կողմից անդամակցության հարցի հետագա քննարկման համար որպես նախապայման էր սահմանվել մինչև 2006թ. դեկտեմբերը ՖԴԿ-ին միջազգային և ներպետական համագործակցության հարցում գործառնական ինքնուրույնության տրամադրումը: Ուստի, այդ նպատակով անհրաժեշտ էր հրատապ փոփոխություն կատարել ՓԼ/ԱՖ օրենքի 12-րդ հոդվածում, որով կսահմանվեր ՖԴԿ ինքնուրույնությունը օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ տեղեկատվության փոխանակման հարցում: Քննարկելով օրենսդրական փոփոխություն նախաձեռնելու խնդիրը՝ Հանձնաժողովը որոշել է ՓԼ/ԱՖ օրենքի 12-րդ հոդվածը նոր խմբագրությամբ ընդունելու հարցը պատգամավորական նախաձեռնության կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով և այն միավորել արդեն իսկ Ազգային ժողովում քննարկվող Քր. օր.-ում, Քր. դատ. օր.-ում և ՓԼ/ԱՖ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական նախագծերի փաթեթի հետ: Արդյունքում՝ ՓԼ/ԱՖ օրենքի նշված փոփոխությունը նախանշված ժամկետներում ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Դա հիմք է հանդիսացել Էգմոնտ խմբի համար՝ շարունակելու ՖԴԿ անդամակցության հարցի քննարկումը, որի շնորհիվ Էգմոնտ խմբի 2007թ. մայիս-հունիս ամիսներին կայացած լիագումար նիստում ՖԴԿ-ն դարձել է այդ կառույցի լիիրավ անդամ[2]:

2. Հանձնաժողովի նիստում, անդրադառնալով իրավապահ մարմիններին բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները հասանելի դարձնելու հարցին, նշվել է, որ դեռևս

[2] Էգմոնտ խմբին անդամակցության հարցում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի պաշտոնական հովանավորներն են հանդիսացել ՌԴ Ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայությունը և Ուկրաինայի Ֆինանսական մոնիտորինգի պետական կոմիտեն:

վաղաժամ է ՀՀ-ում մեղմացնել «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման ռեժիմը:

2006թ. դեկտեմբերի 12-ի նիստ

1. Հանձնաժողովի նիստում քննարկվել են ՄԱՆԻՎԱԼ-ի 21-րդ և Եվրասիական խմբի 5-րդ հերթական լիագումար նիստերում ՀՀ պատվիրակության մասնակցության վերաբերյալ հաղորդումները: ՄԱՆԻՎԱԼ-ի նիստի հաղորդման կապակցությամբ նշվեց, որ ՄԱՆԻՎԱԼ-ի հաջորդ լիագումար նիստը կայանալու է ՖԱՏՖ-ի հետ համատեղ, որի ընթացքում քննարկվելու են Հայաստանի Հանրապետության երկու անմիջական հարևանների՝ Թուրքիայի և Վրաստանի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությունները: Այդ նիստում ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող հնարավոր հարցադրումներին արձագանքելու համար որոշվել է դիմել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով մասնակցություն բերել նշված համատեղ նիստին:

2. Նիստում անդրադարձ է կատարվել ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման առաջընթացին: Նշվել է, որ ՄԱՆԻՎԱԼ-ի լիագումար նիստի ընթացքում քննարկվել է Հայաստանի Հանրապետության ներկայացրած առաջընթացի հաշվետվությունը, սակայն այն հիմք չի ընդունվել, քանի որ Ազգային ժողովում քննարկվող Քր. օր.-ում, Քր. դատ. օր.-ում և ՓԼ/ԱՖ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական նախագծերի միայն ընդունման և ուժի մեջ մտնելուց հետո է հնարավոր Հայաստանի Հանրապետությունը հանել Համապատասխանության բարելավման ռեժիմից (տե՛ս նաև 2006թ. հոկտեմբերի 25-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 1-ին կետը):

3. Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև ՖԴԿ կողմից ներկայացված՝ ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից 3-րդ փուլի գնահատման մեթոդաբանության ձեռնարկի թարգմանությունը և ՖԴԿ-ին հանձնարարել է այդ ձեռնարկի հիման վրա Հանձնաժողովի հաջորդող նիստերին ներկայացնել Հայաստանի Հանրապետության ինքնագնահատման միջոցառումների ծրագիր:

4. Լսվել է Էգմոնտ խմբին Ֆինանսական դիտարկումների կենտրոնի անդամակցության առաջընթացի մասին հաղորդումը, քննարկվել է օրենսդրական փոփոխությունների արձագանքը Էգմոնտ խմբի շրջանակներում, որի առնչությամբ ՖԴԿ-ին հանձնարարվել է շարունակել ժամանակացույցով նախատեսված գործողությունների իրականացումը՝ 2007թ. ընթացքում անդամակցության նպատակով: Հանձնաժողովը դիմել է նաև իրավասու գերատեսչություններին՝ ըստ անհրաժեշտության օժանդակություն ցուցաբերելու ՖԴԿ-ին Էգմոնտի իրավական հարցերով աշխատանքային խմբի հարցաշարը լրացնելու հարցում (տե՛ս նաև 2006թ. նոյեմբերի 25-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 1-ին կետը):

5. Հանձնաժողովին ներկայացվել է նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ուսուցման կարիքների վերլուծության պիլոտային ծրագիրը: Այդ ծրագիրը իրականացվում էր ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) օժանդակությամբ և առաջին շրջանում նախատեսվում էր ներառել Դատախազության, Ոստիկանության և Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ուսուցման կարիքների վերլուծությունը: Այս ծրագրի հիման վրա ստեղծված աշխատանքային խմբերը հարցազրույց են անցկացրել գերատեսչությունների իրավասու աշխատակիցների հետ, հավաքագրել աշխատանքը բնութագրող փաստաթղթեր և ամփոփել ուսուցման կարիքների վերաբերյալ ստացված արդյունքները: Այդ արդյունքները հաշվի են առնվում համապատասխան գերատեսչություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսուցման և վերապատրաստման ծրագրեր իրականացնելիս:

6. Քննարկման է դրվել նաև «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Եվրախորհրդի մասնագիտական եզրակացությունը: Հանձնաժողովը որոշել է այդ եզրակացությունն ուղարկել Արդարադատության նախարարությանը, Գլխավոր դատախազությանը և Ոստիկանությանը, որպեսզի այն հաշվի առնվի նախագծի հետագա քննարկումների ընթացքում: Եվրախորհրդի մասնագիտական եզրակացության քննարկման ընթացքի վերաբերյալ հարցը ներկայացվել է նաև Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 14-ի նիստում (տե՛ս նաև 2006թ. նոյեմբերի 25-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 7-րդ կետը):

7. Հանձնաժողովի նիստում քննարկվել է Հանձնաժողովի կազմը ձևավորելու հարցը: Կենտրոնական բանկին առաջարկվել է Հանձնաժողովը ձևավորելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրերը վերանայելու նպատակով պաշտոնապես դիմել գերատեսչությունների ղեկավարներին՝ իրենց թեկնածուներին ներկայացնելու խնդրանքով: Կենտրոնական բանկն ամփոփել է ստացված գրությունները և ներկայացրել ՀՀ Նախագահի օգնական պարոն Գևորգ Մհերյանին: Դրա արդյունքում ՀՀ Նախագահի կողմից 2007թ. փետրվարի 20-ին ստորագրվել է ՆԿ-38-Ա կարգադրությունը, որով հաստատվել է Հանձնաժողովի նոր կազմ:

<u>2007թ. ապրիլի 14-ի նիստ</u>

1. Հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ Նախագահի օգնական պարոն Գևորգ Մհերյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրել է ՀՀ Նախագահի թիվ ՆԿ-38-Ա կարգադրությունը (տե՛ս նաև 2006թ. դեկտեմբերի 12-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 8-րդ կետը): Կարգադրության հիման վրա որոշվել է, հաշվի առնելով նոր նշանակումները, համապատասխան փոփոխություններ կատարել Հանձնաժողովի աշխատանքների կանոնակարգում:

2. Նիստում ներկայացվել է նաև ՄԱՆԻՎԱԼ-ի և ՖԱՏՖ-ի համատեղ 22-րդ լիագումար նիստում (2007թ. փետրվար) ՀՀ պատվիրակության մասնակցության վերաբերյալ

հաղորդումը (տե՛ս նաև 2006թ. հոկտեմբերի 25-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 1-ին կետը):

3. ՖԴԿ-ն Հանձնաժողովին տեղեկացրել է ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Հայաստանի 3-րդ փուլի գնահատման նախապատրաստման ընթացքի վերաբերյալ: Հանձնաժողովի անդամ գերատեսչությունների ղեկավարներին առաջարկվել է իրենց համապատասխան մասնագետներին հանձնարարել տեղեկատվություն ներկայացնել տվյալ բնագավառի իրավիճակի մասին, որի հիման վրա կնախապատրաստվի համապատասխանության բարելավման միջոցառումների ծրագիր, որը, համաձայնեցվելով Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խմբում, կներկայացվի Հանձնաժողովի հաջորդող նիստերում: Նշված խնդիրը դեռևս կատարման փուլում է:

4. Քննարկման առարկա է դարձել նաև արժութային արժեքների տարանցիկ փոխադրման (ներմուծման) հայտարարագրման վերաբերյալ հարցը, և որոշում է ընդունվել առաջարկել Մաքսային պետական կոմիտեին՝ Կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել տասը հազար եվրոն գերազանցող արժութային արժեքների ներմուծման հայտարարագրման կանոնները, դրանք համաձայնեցնել Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խմբում, ներկայացնել Հանձնաժողովի հավանությանը և ապա՝ հաստատել ու կիրառել այն (տե՛ս նաև 2006թ. հոկտեմբերի 25-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 8-րդ կետը):

5. Հանձնաժողովի նիստի ժամանակ ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆինանսական հաստատությունների գործունեության ու վերահսկողության ընթացակարգերի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջներին համապատասխանության տեղեկանքը: Քննարկման արդյունքում առաջարկվել է Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խմբում համաձայնեցնել ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացման կարգը և հաշվետու անձանց ցանկը՝ արդյունքները ներկայացնելով Հանձնաժողովին: Առաջարկվել է նաև աշխատանքային խմբում քննարկել ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կիրառման ու վերահսկողության հարցերը և համաձայնեցված դիրքորոշումը ներկայացնել Հանձնաժողովին:

6. Հանձնաժողովը ՖԴԿ-ին հանձնարարել է վերլուծել կեղծ մետաղադրամների ծավալների ու միտումների և պլաստիկ քարտերով զեղծարարության վերաբերյալ տեղեկատվությունը, վերլուծության արդյունքները քննարկել աշխատանքային խմբում և արդյունքները ներկայացնել Հանձնաժողովի հաջորդ նիստի քննարկմանը:

7. «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հաղորդման արդյունքում որոշվել է առաջարկել Արդարադատության նախարարությանը շնորհակալական նամակ ուղարկել ՀՀ-ում Եվրախորհրդի ներկայացուցչությանը՝ օրենքի նախագծի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն

տրամադրելու առնչությամբ (տե՛ս նաև 2006թ. դեկտեմբերի 12-ի նիստի վերաբերյալ անդրադարձի 6-րդ կետը):

2007թ. մայիսի 7-ի նիստ

1. Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 14-ի նիստում տրված հանձնարարականի համաձայն՝ ներկայացվել է վճարային գործիքներով զեղծարարության (զեղծարարության փորձերի) և դրամանենգության միտումների մասին հաղորդում, քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում վճարային գործիքներով զեղծարարության և դրամանենգության դեպքերի, դրանց ծավալների, իրականացման հիմնական մեթոդների և բացահայտելիության հարցերը:

2. Հանձնաժողովին ներկայացվել է ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող «սև ցուցակների» և դրանց վարման կարգի վերաբերյալ հաղորդում: Միաժամանակ, ՖԴԿ-ին հանձնարարվել է հրապարակել ՄԱԿ-ի «Համախմբված ցանկ»-ը: Այդ որոշման հիման վրա ՄԱԿ-ի «Համախմբված ցանկ»-ը տեղադրվել է ՖԴԿ ինտերնետային կայքում, և հաշվետու անձանց շրջաբերական նամակներ են ուղարկվել՝ ծանուցելով այդ ցանկին համապատասխան անձանց եկամուտների սառեցման պարտավորության մասին:

Հանձնաժողովի նոր խնդիրները և հետագա գործունեության ուղղությունները

Հանձնաժողովը շարունակելու է իր աշխատանքները ՀՀ Նախագահի կողմից սահմանված գործունեության ոլորտներում տարբեր գերատեսչությունների նախաձեռնությունների և աշխատանքների համակարգման ուղղությամբ: Այդ իմաստով Հանձնաժողովի ներգրավվածությունը պահանջող հետագա գործունեության ոլորտներն են հանդիսանում՝

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը և «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության գործառույթի իրականացման վերաբերյալ» կանոնակարգի պետական գրանցումը: Այդ իրավական ակտերը հիմնականում կապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանությունը ՖԱՏՖ-ի 40 և 9 հատուկ ստանդարտներին, ինչպես նաև այլ միջազգային պահանջներին:

Նախատեսվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը մինչև 2007թ. սեպտեմբեր ներկայացնել Հանձնաժողովի հավանությանը և ՀՀ կառավարության գործունեության ծրագրի համաձայն՝ Կառավարության, որից հետո՝ Ազգային ժողովի քննարկմանը:

Նախատեսվում է նաև Հանձնաժողովի շրջանակներում շարունակել Արդարադատության նախարարության հետ համագործակցությունը՝ նպատակ ունենալով ապահովել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության գործառույթի իրականացման վերաբերյալ» կանոնակարգի պետական գրանցումն ու գործողության մեջ դնելը:

2. Հանձնաժողովը շարունակելու է համակարգել ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Հայաստանի Հանրապետության 3-րդ փուլի գնահատման նախապատրաստումը: Այդ նպատակով, Հանձնաժողովում ներկայացված գերատեսչությունների ջանքերով, ՖԱՏՖ-ի 3-րդ փուլի գնահատման մեթոդաբանության (ամբողջությամբ կիրառվում է ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից) հիման վրա կազմվելու է Հայաստանի Հանրապետության ինքնագնահատման հաշվետվությունը, դրանից առանձնացվելու են Համապատասխանության բացերը և, ըստ յուրաքանչյուր գերատեսչության իրավասության ոլորտի, ներկայացվելու ու իրականացվելու է Համապատասխանության բարելավման միջոցառումների ծրագիր:

<u>ՖԱՏՖ-ի 3-րդ փուլի գնահատման մեթոդաբանության կարևոր առանձնահատկություններից է այն, որ դրա կիրառման ընթացքում համապատասխանության գնահատականների վրա իր ազդեցությունն է թողնում ոչ միայն ՖԱՏՖ-ի յուրաքանչյուր ստանդարտի էական պահանջների արտացոլումը ազգային օրենսդրությունում, այլև մեծապես կարևորվում է այդ ստանդարտների կիրառության արդյունավետությունը (վիճակագրական ցուցանիշների կամ այլ արժանահավատ տվյալների հիման վրա):</u> Այդ առումով, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում <u>ՀՀ օրենսդրության կիրարկման արդյունավետությունը</u> դեռևս խիստ մտահոգության տեղիք է տալիս:

3. Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քրեադատավարական բարեփոխումների շրջանակներում Հանձնաժողովն իր ուշադրության կենտրոնում է պահելու նաև ՓԼ/ԱՖ հանցակազմերով քրեական հետապնդումների համար արդյունավետ ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ մեխանիզմներ ձևավորելու հարցը: Քննչական գործառույթի նախատեսվող փոփոխությունների շրջանակում Հանձնաժողովի առջև ծառացած նոր խնդիրներն են հանդիսանալու ՓԼ/ԱՖ հանցակազմերով քրեական գործերի քննություն իրականացնող մարմինների հստակեցումը, այդ մարմինների և դրանց ու Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջև արդյունավետ համագործակցության բարելավումը, այդ հանցակազմերով քննությունների մեթոդիկայի մշակումը և դրան համապատասխան՝ քննչական ռեսուրսների վերապատրաստումը:

4. Հանձնաժողովը շարունակելու է ծառայել որպես արդյունավետ կառուցակարգ՝ անդամ գերատեսչությունների գործունեության ընթացքում առաջացած՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող տարբեր խնդիրների ու նախաձեռնությունների քննարկման, համաձայնեցման և միասնական դիրքորոշման ձևավորման համար: